

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ» ԱՆԱՎԱՐՏ ՎԵՊԸ

...Եվ բառերի համար քո մարմարյա,
 Հնամենի, բուրյան, որպես մեր հին
 Քարաքանդակ անդուռ մատուռների
 Անջնջելի գրերն հնադարյան...
 Եղիշե Չարենց

DOI : 10.24234/journalforarmenianstudies.v1i64.88

ԱՄՓՈՓՈՒՄ

«Խաչատուր Աբովյան» վեպի մտահղացումը մի քանի տարի զբաղեցրել է Ակսել Բակունցին, որը ջանադիր ձևով ծանոթացել է մեծ լուսավորչի ստեղծագործություններին և նրա կյանքին վերաբերող արխիվային նյութերին:

«Խաչատուր Աբովյան» վեպին անդրադարձ ունեն շատ նշանավոր գրականագետներ Էդվարդ Զրբաշյանը, Սուրեն Աղաբաբյանը, Հրանտ Թամրազյանը: Նրանք վեպը համարել են պատմական (**Թամրազյան Հ., 1984**):

Անավարտ վեպում առկա է Բակունցի և Չարենցի միասնական գնահատականը՝ Աբովյանի պայքարի խոչընդոտներից ծնված ողբերգության խնդրում, ինչպես նկատել է Սուրեն Աղաբաբյանը (**Налбандян В., 1976**):

«Խաչատուր Աբովյան» վեպը բարձր է գնահատել Չարենցը: Մի առիթով նա Ռուբեն Զարյանին ասել է. «Սպասիր, մի քիչ էլ սպասիր և այն ժամանակ կտեսնես, թե ինչեր կանի մեր բարեկամը» (**Աղաբաբյան Ս., 1986**):

Բակունցին հաջողվել է ընթերցողին լիովին տեսանելի դարձնել Աբովյանի դորպատյան կյանքի շրջանը՝ ուսումնական միջավայրով ու դեպի հեռավոր հայրենիքն ունեցած կարոտաբաղձությամբ:

«Խաչատուր Աբովյան» վեպը ճշգրտորեն վերարտադրել է Արևելահայաստանի կյանքի փոփոխությունները Ռուսաստանին միանալուց հետո:

«Խաչատուր Աբովյան» վեպը ավարտված լինելու դեպքում առավել շահեկան ձևով կհարստացներ նորագույն շրջանի հայ գրականությունը ու կդառնար գլուխգործոց:

Բանալի բառեր և արտահայտություններ. Ակսել Բակունց, Խաչատուր Աբովյան, Ֆրիդրիխ Պարրոտ, Դորպատ, Էջմիածին, Երևան, Ռուսաստան, ուսանող, հայրենիք, հայրենաբաղձություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ արձակի մեծ նորարար Ակսել Բակունցը և նրա սիրելի գրչեղբայր ու դարձյալ հայ գրականության շրջադարձի հեղինակ Եղիշե Չարենցը մի առիթով վիճում են, թե իրենց գրվածքներից որն է ամենասիրելին. «Բակունցն ասում է, որ «Ալպիական մանուշակն է», իսկ Չարենցի ամենասիրած գործը «Ասպետական» պոեմն էր, «որը գրել էր Անգլիական այգում, խոտերի վրա պառկած» (Դուլիսանյան Ա., 2022):

Թե՛ Բակունցը և թե՛ Չարենցը հենվել են հայ անցյալի գրականության վրա, հայ կյանքի որոշ ելակետերը տեսել հայ հին դասականների մարգարեական կոախումների մեջ: Այդ առումով երկուսին էլ հետաքրքրել են Խաչատուր Աբովյանի կյանքը և գործը: Այդ հետաքրքրությունների արդյունքում ծնվեցին Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» հետազոտությունը («Գրական տեղեկատու», 1986) և ավելի ուշ «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպը: Չարենցն էլ իր հերթին գրեց. «Դեպի լյառն Մասիս» պոեմը, որում «Վերք Հայաստանի» գլուխգործոցի մասին կան հետևյալ խոհերը.

Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում:

Զուր չէ՞ արդյոք վատնել անհատների իր ձիրքը,

Եվ չի՞ արդյոք եղել իր ողջունած հեռուն

Մի թիարան վատթար,- և այդ գիրքը

Իր արյունով, սրտի յուրաքանչյուր նյարդով,

Իր վերջին ճիգով հորինած-

Չէ արդյոք խեղճության ու սխալի արդյունք՝

Սերունդների երթին ի վնաս... (Չաբենց Ե., 1987)

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակսել Բակունցը հատկապես 1956 թվականից հետո գտնվել է նշանավոր գրականագետների ուշադրության կենտրոնում: Նրա ստեղծագործությունը մեկնաբանվել է հայ դասական գրողների երկերի համեմատական, վերլուծական, գրաքննադատական կտրվածքով: Այդ մեթոդով էլ շարադրված է այս հոդվածը:

ՔՆՆԱԴՈՒՄ

Խ.Աբովյանը ֆրանսիացի հայագետների գնահատմամբ

Շատերն են գրել Խաչատուր Աբովյանի մասին և հենց օտարներն են նրան կոչել հայ ազգի լուսավորիչ:

Աբովյանը անձնական տառապանք էր համարում իր ազգի վիճակը, մահմեդական լծի ծանրությունը հալածում էր նրան, ու նա ելքեր էր փնտրում: Այդ ելքը տեսավ «Վերք Հայաստանի» վեպով իր ազգին դիմելու մեջ: 1835-ի հունվարի 23-ին Պետերբուրգից Ֆրիդրիխ Պարրոտին ուղարկած նամակում Աբովյանը գրել է. «Իմ ազգը թերագնահատում է ապագան, այդ բանը ասում եմ փորձով: Հանգստությունս կորել է» (*Դիվան Խ.Աբովյանի*, 1948):

Օտարազգի հայագետները հիացմունքով են գրել Աբովյանի անձի ու ստեղծագործության մասին: Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը ծավալուն հետազոտություն ունի՝ նվիրված Աբովյանին, որը լույս է տեսել Փարիզում 1913-ին: Այդ ուսումնասիրության մեջ հայագետն իր պարտքն է համարում գրել նաև Ֆրիդրիխ Պարրոտի մասին, որի ջանքերով Աբովյանը կարողացավ վեց տարի հատուկ դասընթացներ անցնել Դորպատի համալսարանում՝ Ռուսաստանի պետական ծախսերով: Մակլերը մանրամասն ներկայացնում է Ֆրիդրիխ Պարրոտի տոհմաձառը՝ նրա արմատները հասցնելով մինչև Ավինյոնում նստող Ուրբանոս V պապ, որը նպաստել է խաչակրաց արշավանքներին՝ արևելյան քրիստոնյաներին, այդ թվում հայերին՝ թուրքերի ավերածություններից ու թալանից ազատելու համար: Մակլերի նպատակն է իր աշխատության մեջ ներկայացնել, թե ինչպես մի բնախույզ, ծագումով մոնբելիարցի, Դորպատի համալսարանի պրոֆեսոր, Էջմիածնի նորընծա միաբան Խաչատուր Աբովյանի օգնությամբ բարձրացել է Արարատ լեռը: Այդ վերելքի

ընթացքում վերջինս թողել է այնպիսի տպավորություն, որ պրոֆեսորի օգնությամբ սովորել է Դորպատի համալսարանում, ամուսնացել Ռենից սերող լյութերական ընտանիքին պատկանող աղջկա հետ ու դարձել հիմնադիրը Արևելահայաստանի հայ նոր գրականության (**Macler F., 1913**):

Ժորժ Ֆրիդրիխ Պարրոտը, որն Արարատ լեռը բարձրանալու համար ընտրել էր Աբովյանին, ծնվել է Montbéliard-ում ու եղել է ազգությամբ գերմանացի:

Աբովյանը մինչև Դորպատ մեկնելը զգում էր, որ իր կրթությունը դեռ ավարտված չէ և որոշում է մեկնել Վենետիկ՝ Մխիթարյան հայրերի մոտ կատարելագործվելու: Այդ հաստատության հեղինակությունը շատ ներգործուն էր ողջ հայ իրականության վրա: Մակլերը հետաքրքիր փաստ է բերում. Աբովյանը Վենետիկ պետք է մեկնե՝ իր հետ տանելով ընտանիքին (**Ժամհարյանց Ի., 1897**), որպեսզի նրանց ազատեր պատերազմի դժնդակությունից:

Հայտնի աբովյանագետ Պիոն Հակոբյանն էլ նշում է, թե Պարրոտի նախնիները ֆրանսիական պատմության վավերագրերում հիշատակվում են XIV դարից սկսած և ապրել ու գործել են Մոնֆելիար քաղաքում (**Հակոբյան Պ., 1982**):

Մակլերը մանրամասն պատմում է, թե ինչպես է Աբովյանը երազել հոգևորական դառնալ ու երբ հասկանում է, որ իր երազանքը չի իրականանալու, 1839-ին ամուսնանում է օրիորդ Էմիլյա Լոռզեի հետ՝ նախապես պայմանավորվելով, որ իրենց գավակներին կնքելու են հայ լուսավորչական եկեղեցում:

Աբովյանը, ըստ Մակլերի, հիմնել է օրինակելի դպրոց, որում երեխաները հեշտությամբ գրում և կարդում էին հայերեն, վրացերեն, թուրքերեն, ռուսերեն, գերմաներեն ու ֆրանսերեն (**Macler F., 1913**):

Մակլերը «Վերք Հայաստանին» համարում է հայրենասիրական վսեմ երգ՝ ուղղված հայրենասեր քաջորդիներին, որոնցից մեկն էր Աղասին՝ վեպի գլխավոր հերոսը: Հետագայում Աղասու օրինակով, առավել լայն ընդգրկումով, հայրենասերների կերպարներ կերտեց Բաֆֆին: Նա միաժամանակ Աբովյանի վեպը համարում է ժողովրդական բանահյուսության իսկական գանձարան: Մակլերը մեկնաբանում է նաև Աբովյանի մյուս գրվածքները և իր հետազոտությունն ավարտում է Անդրեաս Տեր-

Մարությանի Աբովյանի արձանը կերտելու պատմությամբ՝ մանրամասնելով քանդակագործի կենսագրությունը:

Նշանավոր հայագետը շատ բարձր է գնահատել «Վերք Հայաստանի» վեպը՝ որպես XIX դարի առաջին տասնամյակների հայ կյանքի ռեալիստական ու ռոմանտիկական նկարագիր: Նա Աբովյանին համարում է հայ ազգի հարատևությունն ապահովող հզոր երևույթ:

Աբովյանին ըստ արժանվույն գնահատել է մեր օրերի ամենանշանավոր ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեն: 1979-ին Բեյրութի «Զարթոնք» պարբերականին տված հարցազրույցում նա ասել է. «Հայերը ստեղծել են հոյակապ մշակույթ, ինչպես Աղթամարի եկեղեցին, ինչպես Գրիգոր Նարեկացին և Խաչատուր Աբովյանը: Դրանք գործեր են, որոնք պատկանում են ընդհանուր մարդկային ժառանգությանը» (*«Զարթոնք», 1979*):

Նրա կարծիքով հայ ազգին ճիշտ հասկանալու ուղեցույցը, սեփական ազգը լավագույնս ներկայացնողը «Վերք Հայաստանի» վեպն է, որում տրվում է հայ ազգային ոգու գերազանց քննությունը, ներկայացվում ազգի ներկայի ու անցյալի ճշգրիտ ընթացքը:

Վեպում Աբովյանը Երևանի բերդի գրավումը նկարագրում է խիստ պատկերավոր՝ այն համեմատելով դժոխքի ավերման հետ (*Mahé A. et J.-P., 2012*):

Բակունցը Աբովյանի կյանքի մեկնաբան

Նախքան «Խաչատուր Աբովյան» վեպը գրելը Բակունցը ջանադիր ձևով ուսումնասիրել է Աբովյանի կյանքը լուսաբանող բազմաթիվ արխիվային նյութեր: Վեպը գրվելուց հետո 1939 թվականից սկսած ոչ միայն տպագրվեցին Աբովյանի բազմահատոր ստեղծագործությունները, նամակները, ժամանակակիցների հուշերը, այլև արժեքավոր ուսումնասիրություններ գրվեցին մեծ լուսավորչի կյանքի և գործի մասին: Այդ բնագավառի ամենամեծ գիտակը դարձավ վաստակաշատ ու քաջահմուտ գրականագետ Պիոն Հակոբյանը:

Բակունցի ստեղծագործության հիմնալի մեկնիչ Սուրեն Աղաբաբյանը հանգամանալի գրել է «Խաչատուր Աբովյան» վեպի մասին՝ շեշտելով հետևյալ իրողությունը. «Խաչատուր Աբովյան» վեպի տպագրված հատվածները վկայում են

Բակունցի երկարատև ու ջանադիր քննական աշխատանքը պատմական ժամանակաշրջանի համար բնորոշ վավերագրերի և Աբովյանի ձեռագրերի հետ, որոնք վեպի կառուցման տարիներին մեծ մասով դեռևս հրապարակված չէին» (Աղաբաբյան Ս., 1971):

«Խաչատուր Աբովյան» վեպը գրելիս Բակունցն ունեցել է վառ երևակայություն, որպեսզի պատկերի իր չտեսած Դորպատը և նրա հոչակավոր համալսարանը: Ես այդ համալսարանը տեսել եմ 1983-ին, և դա բավարար էր հասկանալու, թե իր ժամանակին որքան առաջնակարգ է եղել այն: Դորպատը, որն իմ տեսած ժամանակ Տարտու էր կոչվում, տիպիկ եվրոպական քաղաք էր. Խորհրդային Միության կնիքն այդ քաղաքում չէր զգացվում: Համալսարանն ուներ Աբովյանի անվան շքեղ կաբինետ, որտեղ դրված էր Աբովյանի շատ գեղեցիկ կիսանդրին: Համալսարանի կողքի փողոցը կոչվում էր Աբովյանի անվան: Փաստորեն, այդ ամենը վերացավ Խորհրդային Միության փլուզման հետ, որովհետև այժմ ոչ այդ կաբինետը կա, ոչ Աբովյանի անվան փողոցը: Խորհրդային Միության հետ դրանք էլ են անհետացել, ինչպես Բեռլինի աշխարհահռչակ Պերգամոն հնագիտական թանգարանից Բեռլինի պատը քանդելուց հետո վերացել է Ուրարտու-Հայաստան շատ հարուստ բաժինը:

«Խաչատուր Աբովյան» վեպից մեզ հասել են հատվածներ: Դրանք երեքն են՝ «Դեպի լյառն Մասիս», «Լիբեր Արմենիեր», «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի»:

Վեպի երրորդ հատվածի գործողությունները տեղի են ունենում Հայաստանում, որը գրողի պաշտելի հայրենիքն էր՝ նրան խիստ ծանոթ անցյալով ու ներկայով, իսկ վեպի առաջին և ամենածավալուն «Լիբեր Արմենիեր» հատվածներում նկարագրում է Դորպատի կյանքը և՛ մտավոր միջավայրում, և՛ շարքային մարդկանց շրջանակում:

Բակունցը Աբովյանի վախճանը փորձել է պարզաբանել սեփական հետազոտությամբ ու դրան է նվիրել առանձին գրքույկ, որը լույս է տեսել 1932-ին: Գրքույկի նպատակն էր բացահայտել Աբովյանի անհետացման առեղծվածը:

Բակունցի տեսակետն արժանացել է Նիկողայոս Ադունցի քննադատությանը: Վերջինս 1933-ի ամռանը Բրյուսելում գրել է «Խաչատուր Աբովյանի վախճանը» հոդվածը, որն առաջին անգամ լույս է տեսել 1933-ին «Վեմ» հանդեսում (Ադունց Ն., 2006):

Հերքելով Բակունցի առաջարկած վարկածը Աբովյանի մասին՝ Ադոնցը, որն ուներ Աբովյանի պաշտամունքը, առաջարկում է հետևյալ պատգամը բոլոր հայերի համար. «Աբովյանը այն անձերից էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին և երազները հոգում» (Ադոնց Ն., 2006):

«Խաչատուր Աբովյան» վեպի «Դեպի լյառն Մասիս» ենթագլխի բնաբանը Ե. Չարենցի համանուն պոեմից մի հատված է.

Դեմը դաշտն էր անծայր, իսկ հեռվում-Մասիսը.

Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր

Բարձրացել էր ինքը և սառցանիստ

Գեղեցկությամբ գերվել (Բակունց Ա., 1955):

Աբովյանը հոգևորականության հետ խնդիրներ է ունեցել Արարատ լեռը քարձրանալու պատճառով: Այսօրինակ հարցերը Բակունցը խորապես ուսումնասիրել է ու դրանց արձագանքը կա վեպի սկզբում: Աբովյանն ու Պարրոտը Արարատի գագաթին չեն տեսել նոյյան տապանի մնացորդները, ու սա արդեն հավասար էր հերետիկոսության: Էջմիածնի հոգևորականները Խաչատուրին համարում են եկեղեցու անարժան զավակ, լյութերական և նման նվաստացնող խոսքերով որակում նրան:

«Լիբեր Արմենիեր» հատվածում շատ համոզիչ, բնական պատկերված է Դորպատի ուսանողական կյանքը և դասախոսական միջավայրը ոչ միայն համալսարանում, այլև վերջիններիս ընտանեկան միջավայրում:

Հայտնի է, որ ոչ բոլորին էր հաջողվում ավարտել Դորպատի համալսարանը սահմանված ժամկետում: Կային ուսանողներ, որոնց կոչում էին հավերժական, նրանք նույնիսկ չէին էլ վերադառնում իրենց ընտանիքներ ու մնում էին Դորպատում: Կային նաև «նրանք, որ Դորպատից հեռանում էին ոչ դեպի հայրենիք, այլ ով գիտե ուր, նրանք բոլորը Դորպատում, կազմելով ազատ եղբայրություն, ապրում էին ինչպես կոզակներն անծայրածիր ստեպաներում» (Բակունց Ա., 1955):

Աբովյանը վեպում պատկերված է ամենահմայիչ գծերով: Ժամանակակիցները, որոնք մոտիկից ճանաչել են Բակունցին, շատ ջերմորեն են բնութագրում նրան: Նշանավոր հնագետ, պատմաբան, սայաթնովագետ, Չարենցի ու Բակունցի մտերիմ ընկեր Մորուս Հասարթյանն իր հուշերում Ակսելին համարում է շքեղ մարդ, շքեղ գրող,

մեծ հոգով ու սրտով, և նրա երկերը շատ նման էին հենց իրեն (**Դոլուխանյան Ա., 2022**):
Ելնելով ժամանակակիցների հուշերից՝ Ռաֆայել Իշխանյանն էլ Բակունցի մասին գրել է. «Նա որքան հմայիչ է իր ստեղծագործություններում, նույնքան էլ հմայիչ է եղել կյանքում որպես անձնավորություն, մարդ» (**Իշխանյան Ռ., 1960**):

Բակունցն էլ իր կրթությունը ստացել է օտարության մեջ. նա որ այնքան սիրում էր Հայաստանը, հեռու Խարկով քաղաքում կարոտել է հայրենիքին, հարազատներին: Նույն կարոտի անսահման տանջող զգացումը ունեցել է Աբովյանը: Վերջինս ունեցել է ոչ միայն ուսումը հազեցնելու ծարավի բավարարում, այլ մի ոչ հզոր երկրի զավակի սրտակեղեք ապրումներ: Նա միշտ հպարտ է եղել հայ լինելու համար. «Հայրենաբաղձությունը նրան մղում էր պատմել հայրենիքի մասին: Եվ նա պատմում էր Պարրոտին, ավելի հաճախ նրա կնոջը, պատմում էր տիկին Էլոիզ Աուսլենդերին, նույնիսկ երեխաներին էր պատմում» (**Բակունց Ա., 1955**):

Անսահման սիրելով իր հայրենիքը՝ Աբովյանն այն համեմատում էր Դորպատի հետ և ցավով տեսնում իր հայրենակիցների հետամնացությունը: Հետաքրքիր մի հատված կա վեպում՝ գրված գրաբարով. այն պատմում է, թե ինչ ձևով է երեխայի լացի ձայնը կտրում գերմանացի մայրը և թե ինչպես՝ հայ մայրը (**Բակունց Ա., 1955**):

Բակունցին ծանոթ է շոտլանդացի դիվանագետ, նկարիչ, ճանապարհորդ Ռոբերտ Քլեր Պորտերի ստվարածավալ ուղեգրությունը Պարսկաստանում, Վրաստանում, Հայաստանում և Հին Բաբելոնում կատարած ճամփորդության, որը լույս է տեսել Լոնդոնում 1821 թվականին: Այդ գրքում Պորտերը հիացմունքի երկար էջեր է գրել հայ Բագրատունիների մայրաքաղաք Անիի ավերակների, Հայաստանի հայերով բնակեցված, մրգատու այգիների մեջ կորած մայրաքաղաք Երևանի մասին, նաև այցելել է հինավուրց Արտաշատ և Էջմիածին քաղաքները: Վեպում ասվում է, որ Աբովյանը ձեռք էր բերել այս գիրքը Դորպատում (**Porter Ker R., 1821**):

Մեծարժեք ու ծավալուն հոդված ունի «Խաչատուր Աբովյան» վեպի մասին ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը: Այն կոչվում է «Մեծ կյանքի հետքերով» և քննում է պատմագեղարվեստական ժանրի առանձնահատկությունները: Նա այս վեպի առիթով գրում է. «Աբովյանին նվիրված վեպը շատ կարևոր նշանակություն է Բակունցի ստեղծագործական կյանքում: Դա գրողի վերջին ստեղծագործական մտահղացումն է և

ցույց է տալիս գեղարվեստական վարպետության այն մակարդակը, որին հասել էր նա այդ շրջանում» (**Զրբաշյան Էդ., 1959**):

Անշուշտ, Բակունցը ուշադիր կարդացել է Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որովհետև վերջինիս դորպատյան հայրենաբաղձ հիշողություններում զգացվում են հայ գյուղական կենցաղի աբովյանական նկարագրեր:

Դորպատում Աբովյանի հանդիպած չերքեզի կերպարի միջոցով պարզ է դառնում, թե որքան խորքով է Աբովյանը ճանաչում Արևելքը և նրա մարդկանց:

Վեպում երևում է, թե որքան մտահոգ է եղել Աբովյանը հայ կնոջ իրավագուրկ վիճակի համար: Ահա թե ինչ է ասում Արմենիերը տիկին Էլոիզին.

- Այո, տիկին, նրանք խեղճ են: Նրանք ոչ միայն չեն կարողանում եկեղեցում երգել, այլև չեն կարող սիրել և գուցե թե իրենց սրտում գաղտնի սիրեն մեկին, բայց չեն կարող այդ մասին հայտնի ասել: Նրանց շատ կանուխ են ամուսնանում: Մեզանում ասում են՝ գդակդ զարկիր աղջկա մեջքին, եթե աղջիկը վայր չընկավ, ուրեմն ժամանակն է ամուսնացնելու... (**Բակունց Ա., 1955**):

Դորպատում սովորող Աբովյանը, յուրացնելով նոր լեզուներ, նոր կենցաղավարությունը, երբեք չի մոռանում իրեն այնքան սիրելի հայրենականը, որը հարազատ է, սակայն հետ է մնացել եվրոպական կյանքի առաջընթացից: Ահա թե ինչպես է Աբովյանը նկարագրում Էջմիածնի որոշ հոգևորականների հետամնացությունը. «Իսկ Շիրաճին դեռ նոր է զարթնել քնից և կեղտոտ եղունգներով քաղցր քորում է մարմինը և միայն մնչում է... Մուկը դուրս է վազում մի ուրիշ խուց, որտեղ ամբարապետ Կյուրեղ հայր-սուրբը վիթխարի քրեղանի մեջ մածնաբրդոշ է արել և թոնրի կրակով խորոված ուլի մսերը բրդոշից հետո մատներով մղանում է բերանի քարանձավը» (**Բակունց Ա., 1955**):

Բակունցը հրաշալի գիտեր, որ Հայաստանի պատմական հարուստ անցյալը իմանալով և նրա ապագայի համար ծայրահեղ մտահոգ Աբովյանը պետք է մտածեր նաև հայ կնոջ առաջընթացի մասին: «Վերք Հայաստանի» վեպում նա հայ երիտասարդ կանանց ներկայացնում է որպես հեքիաթի հուրի-փերիներ:

Շենց այդ իմանալով է Բակունցը «Խաչատուր Աբովյան» վեպում զետեղել է «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» հատվածը:

Հայ նոր գրականության մեջ գերիշխող թեմա է դառնում կնոջ ազատագրման խնդիրը: Այդ մասին գրում են Մուրացանը, Շիրվանզադեն, Սունդուկյանը, Զոհրապը, Թումանյանը: Այդ հարցերը «Մշակում» շարունակ առաջադրում է Գրիգոր Արծրունին: Սունդուկյանի «Պեպո» պիեսի առիթով Գրիգոր Արծրունին գրում է. «Հայը չգիտե սերը ինչ է նշանակում, նա պսակվում է առանց սիրելու: Ամուսին դառնալով նա կնոջ վերա նայում է որպես իր սեփականության վերա, հայր դառնալով նա իր սեփականություն է համարում իր երեխաները: Մի կամքն է իշխում միայն ընտանիքի մեջ՝ հոր կամքը, մի համոզմունք ունի ընտանիքը՝ հոր համոզմունքը, մի խելք՝ հոր խելքը» (Արծրունի Գ., 2009):

«Մայրանա» գործը վերաբերում է Էջմիածնի սինոդի այն տարիներին, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսը Հովհաննես Ը Կարբեցին էր (1831-1842), որը կաթողիկոս ընտրվելուց հետո հալածել է Ներսես Աշտարակեցու կողմնակիցներին («Ամենայն Հայոց կաթողիկոսներ», 2001):

Դեռևս V դարում Սահակ Պարթևը իր «Կանոնգրքում» քահանաներին երկու խստագույն պատվիրան էր թողել: Առաջին՝ եթե ամուսնացողներից մեկը համաձայն չէ ամուսնանալու, ապա պսակադրությունը չի վավերացվում և երկրորդ՝ չհաս գույզին չամուսնացնել:

Հայ եկեղեցին երբեմն այդ պատվիրանը չի պահել, և դա երևում է Մայրանի դեպքում, որը ինչ-որ առումով հիշեցնում է Թումանյանի՝ ինը տարեկանում բռնությամբ ամուսնացրած Մարոյին. «1829 թվի ձմեռը, քանաքեռցի այրի Եղսանը իր դուստր Մայրանին տասը տարեկան հասակում (ի 10-րդ հասակի) բռնությամբ ամուսնացնում է երևանաբնակ ոմն Նիկողոս Սուքիասովի հետ» (Բակունց Ա., 1955):

Մայրանը եկեղեցում համաձայնություն չի տվել, քահանան բռնադատել է նրա համաձայնությունը՝ նույնիսկ փայտով ծեծել աղջկան: Փեսան հայտնել է, թե աղջիկը եկեղեցում անհամաձայնություն չի հայտնել, այլ քահանան տեսնելով, որ աղջիկը չի կամենում խոնարհել գլուխը, բռնությամբ խոնարհեցրել է: Աղջիկը չի մտել ամուսնական առագաստ, փախել, թաքնվել է ձյան տակ: Աղջիկը հոգեկան ցնցումից դառնում է լալ և անդամալույծ: Երեք տարի հետո Սուքիասովը մեկ ուրիշ գյուղում ամուսնանում է մի այրի կնոջ հետ և ունենում է երկու զավակ:

Չափազանց գունեղ պատկերներով է ներկայացված Երևանի շուկան, ուր ռուս-պարսկական պատերազմից հետո կարելի էր տեսնել տարբեր ազգի մարդկանց՝ հայեր, պարսիկներ, թուրքեր, թաթարներ, եզդի քրդեր և լեռնական հրեաներ, որոնք իրենց քաղղեական ծալ-ծալ մորուքներով ու երկար ջյուրբաններով տարբերվում էին բոլորից:

Երևանի շուկա էին գալիս նաև ռուսական բանակի սպաներ՝ իրենց կանանց հետ: Ռուս կանայք առանց գլխաշորերի էին ու նրանց զգեստի տակից պարզ երևում էին կնոջ շարժվող մարմնի ձևերը: Նրանք բարձր ծիծաղում էին. «Այդ ծիծաղը հնչում էր սանձարձակ կրքով,-կարծես կանաչ մարգագետնի վրա,-վրնջում էր էգ ձին: Եվ այդ ժամանակ երիտասարդ վաճառականներին թվում էր, թե գորգի միջից դուրս է եկել այն կինը, որի մարմինը հրդեհվում էր գորգի գույների հետ...» (Բակունց Ա., 1955):

Վեպի այս հատվածում նորից հայտնվում են Աբովյանը, որը Երևանի արքունական դպրոցի տեսուչ Խրիստաֆոր Արտեմիչ Աբովյանն էր, այսինքն՝ Խաչատուր Աբովյանը և նրա կինը՝ Էմիլյա Լոռզե-Աբովյանը:

«Գործ Մայրանա» հատվածի վերջում դրված է Աբովյանի դիմումը Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Մայրանի՝ այդ թշվառ կնոջ գործին լուծում տալու խնդրանքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչատուր Աբովյանի կերպարը երկար տարիներ զբաղեցրել է Ակսել Բակունցին: Նա ջանադիր ձևով նյութեր է հավաքել գրողի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ: Նրան հաջողվել է ստեղծել մեծ լուսավորչի կենդանի կերպարը՝ պատկերելով նրա կյանքը թե՛ Հայաստանի և թե՛ Դորպատի համալսարանի միջավայրում:

Բակունցի «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպը նորագույն շրջանի հայ դասական գրականության լավագույն գործերից է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ադունց Ն. (2006)**, Երկեր, Կ.Բ, Հատորը հրատարակության պատրաստեց Պ.Հ.Հովհաննիսյանը, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Ադաբաբյան Ս. (1971)**, Ակսել Բակունց, Երևան, «Հայաստան» հրատ.:

3. Աղաբաբյան Ս. (1986), Հայ սովետական գրականության պատմություն, հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
4. «Ամենայն Հայոց կաթողիկոսներ», Խմբագրությամբ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, «Հայագիտակ» հրատ.:
5. Արծրունի Գ. (2009), Գրականություն, արվեստ, գեղագիտություն, Հոդվածների ժողովածու, Կազմող և խմբագիր՝ Յակ.Ի.Խաչիկյան, Երևան, «Գիտություն» հրատ.:
6. Բակունց Ա. (1955), Երկեր, կազմեց և խմբագրեց Սերգեյ Պայազատ, Երևան, «Հայպետհրատ»:
7. «Գրական տեղեկատու» (1986), Հայաստանի սովետական գրողների միության անդամներ, Կազմեց Հայկ Խաչատրյան, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
8. «Դիվան Խ.Աբովյանի» (1948), հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
9. Դոլուխանյան Ա. (2011), Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
10. Դոլուխանյան Ա. (2022), Մորուս Հասրաթյան, Ինքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, Newmag հրատ.:
11. «Զարթոնք» (1979), N 31, Բեյրութ:
12. Թամրազյան Հ. (1984), Սովետահայ գրականության պատմություն, Երևան, «Լույս» հրատ.:
13. Իշխանյան Ռ. (1960), Կենսագրություն և մատենագիտություն, Երևան, ՀՍՍՌ ԱԼ Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանի հրատ.:
14. Հակոբյան Պ. (1982), Վերելք, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
15. «Հոդվածների ժողովածու» (1959), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
16. Չարենց Ե. (1987), Հատընտիր, Կազմեցին՝ Էդվարդ Զրբաշյան, Անահիտ Չարենց, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
17. Չարենց Ե. (2007), Վերջին խոսք, Դառնացած, լքված, մեկուսացված, բանտարկված հանճարի գիրը՝ ընդհատված 1937 թվին, Երևան, «Հայագիտակ» հրատ.:
18. Macler F. (1913), Arménie, Montbeliard, Wurtemberg, Paris.
19. Mahé Annie et Jean-Pierre (2012), Histoire de l'Arménie des origines à nos jours, Perrin.

20. **Налбандян В., Саринян С., Агабабян С. (1976)**, Армянская литература, Учеб. пособие для студентов филолог. специальностей ун-тов и пед. ин-тов, Москва, изд. "Высшая школа".
21. **Porter Ker Robert (1821)**, Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babilonia during the years 1817, 1818, 1819 and 1820, in two volumes, vol. I, London.

REFERENCES

1. **Adonts N. (2006)**, Erker /Greations/, The volume was prepared for publication by P.H.Hovhannisyan, Yerevan, YSU APublishing House.
2. **Aghababyan S. (1971)**, Aksel Bakownc /Aksel Bakunts/, Hayastan Publishing House, Yerevan, , 275 p.
3. **Aghababyan S. (1986)**, Hay sovetakan grakanowt'yan patmowt'yown /History of Armenian Soviet Literature/, vol. I, Yerevan, ArmSSR SA Publishing House.
4. **«Amenayn Hayoc kat'oghikosner» /“Catolicos of all Armenians”/**, Edited by Petros Hovhannisyan (2001), Yerevan, Hayagitak Publishing House.
5. **Artsruni G. (2009)**, Grakanowt'yown, arvest, geghagitowt'yown /Literature, Art, Aesthetics/, A collection of articles, Compiled and edited by Yakov I.Khachikyan, Yerevan, Gitutyun Publishing House.
6. **Bakunts A. (1955)**, Erker /Creations/, Compiled and edited by Sergey Payazat, Yerevan, Haypethrat Publishing House.
7. **«Grakan teghekatow» /“Literary informer”/ (1986)**, Members of the Union of Soviet Writers of Armenia, Compiled by Hayk Khachatryan, Yerevan, Sovetakan Grogh Publishing House.
8. **«Դիվան Խ.Աբովյանի» /“Divan Kh.Abovian”/ (1948)**, vol. II, Yerevan, ArmSSR SA Publishing House.
9. **Dolukhanyan A. (2011)**, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ /Frederic Macler Armenologist/, Yerevan, Zangak-97 Publishing House.

10. **Dolukhanyan A. (2022)**, Morows Hasrat'yan, Inqnowt'yan & jhar'angowt'yan vaveragiry' /Morus Hasratyan, Certificate of Identity and Inheritance/, Yerevan, Newmag Publishing House.
11. **«Zart'onq» /“Zart'onk”/ (1979)**, N31, Beirut.
12. **Tamrazyan H. (1984)**, Sovetahay grakanowt'yan patmowt'yown /History of Soviet Armenian Literature/, Yerevan, Luys Publishing House.
13. **Ishkhanyan R. (1960)**, Kensagrowt'yown & matenagitowt'yown /Biography and bibliography/, Yerevan, Publication of the State Republican Library named after Al.Myasnikyan.
14. **Hakobyan P. (1982)**, Verelq /Ascent/, Yerevan, Sovetakan Grogh Publishing House.
15. **«Hodvac'neri jhoghovac'ow» /“A collection of articles”/ (1959)**, Yerevan, SA ArmSSR Publishing House.
16. **Charents Y. (1987)**, Haty'ntir /Selected/, It was composed by Edward Jrbashyan, Anahit Charents, Yerevan, Sovetakan Grogh Publishing House.
17. **Charents Y. (2007)**, Verjin xosq, Dar'nacac', lqvac', mekowsacvac', bantarkvac' hantwari giry'` y'ndhatvac' 1937 t'vin /Last word, The writing of a bitter, abandoned, isolated, imprisoned genius, interrupted in 1937/, Yerevan, Hayagitak Publishing House.
18. **Macler F. (1913)**, Arménie, Paris, Montbeliard, Wurtemberg.
19. **Mahé Annie et Jean-Pierre (2012)**, Histoire de l'Arménie des origines à nos jours, Perrin.
20. **Налбандян В., Саринян С., Агабабян С. (1976)**, Armyanskaya literatura /Армянская литература/, Учеб. пособие для студентов филолог. специальностей ун-тов и пед. ин-тов, Москв, изд. "Высшая школа".
21. **Porter Ker Robert (1821)**, Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babilonia during the years 1817, 1818, 1819 and 1820, in two volumes, vol. I, London.

Аэли́та До́лукхя́н

Неоконченный роман Акселя Бакунца «Хачатур Абовян»

Заклучение

Ключевые слова и выражения: Аксель Бакунц, Хачатур Абовян, Фридрих Паррот, Дерпт, Эчмиадзин, Ереван, Россия, студент, родина, тоска по родине.

Замысел романа «Хачатур Абовян» Аксель Бакунц вынашивал на протяжении многих лет. Писатель скрупулезно изучал касающиеся его жизни архивные материалы, углубился в исследование творчества великого просветителя.

О романе «Хачатур Абовян» писали многие известные литературоведы – Эдвард Джрбашян, Сурен Агабабян, Грант Тамразян, считавшие, что данный роман является историческим (Тамразян Г., 1984).

Как отмечает Сурен Агабабян (Агабабян С., 1986), Бакунц и Чаренц едины в оценке драмы, порожденной борьбой Абовяна, исполненной неодолимых препятствий.

Е. Чаренц дал высокую оценку роману Бакунца. Однажды он сказал Рубену Заряну: «Подождем и вскоре увидим, что еще создаст наш друг» (Налбандян В., 1976).

Бакунцу удалось представить читателю дерптский период его жизни сквозь призму студенческой среды и неумолимой тоски по далекой родине.

В романе «Хачатур Абовян» правдиво отображены перемены, имевшие место в восточноармянской действительности после присоединения к России. Если бы роман был завершен, то он несомненно обогатил бы армянскую литературу новейшего периода и стал бы шедевром.

Aelita Dolukhanyan

The Unfinished “Khachatur Abovyan” Novel by Aksel Bakunts

Conclusion

Key words and expressions: Aksel Bakunts, Khachatur Abovyan, Friedrich Parrot, Dorpat, Tartu, Echmiatsin, Yerevan, Russia, student, Motherland, homeland, patriotism.

The idea of the “Khachatur Abovyan” novel occupied Aksel Bakunts’s mind for several years leading him to studiously examine the writings of the great educator, as well as to research the archival materials about Abovyan’s life.

Numerous remarkable literary critics, including Edvard Jrbashyan, Suren Aghababyan, and Hrant Tamrazyan, have analyzed the novel “Khachatur Abovyan.” They have all considered it a historical novel (Tamrazyan H., 1984).

This unfinished novel reflects the joint evaluation of Bakunts and Charents regarding the tragic issues and barriers that Abovyan had to fight for bringing his vision to life, as noted by Suren Aghababyan (Nalbandian V., 1978).

Yeghishe Charents tremendously admired the “Khachatur Abovyan” novel. On one occasion, he told Ruben Zaryan, “Wait, wait a bit more, and then you will see what our friend will accomplish.” (Aghababyan S., 1986).

Bakunts succeeded in bringing to life the period of Abovyan’s life when he was studying in Dorpat (present-day Tartu in Estonia), vividly describing Abovyan’s university environment and longing for his distant homeland.

The novel “Khachatur Abovyan” has accurately represented the changes in the life of Eastern Armenia after it joined Russia. Had the novel “Khachatur Abovyan” been completed, it would have greatly enriched the modern Armenian literary heritage and would have been considered a masterpiece created by Aksel Bakunts.

Աելիտա Դոլուխանյան - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 36 գրքի և շուրջ 780 հոդվածի: **e-mail** aelita.dolukhanyan@gmail.com

Aelita Dolukhanyan - Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of the NAS RA, Chair of the Department of Ancient and Medieval Armenian

Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary connections, Author of 36 books and over 780 articles. e-mail: aelita.dolukhanyan@gmail.com

Аэлита Долуханян - член корреспондент НАН РА, доктор филологических наук, профессор, зав.кафедрой древнеармянской и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х.Абовяна. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, устное народное творчество, современная армянская литература, методика преподавания литературы, литературная критика, арменоведение, литературные связи. Автор 36 книг и более 780 статей. **e-mail:** aelita.dolukhanyan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 03.01.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 08.01.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ